

Կարծիք

Հրանուշ Սուրենի Զաքյանի «Կրկնասեռության իմաստային- գործառական դրսևորումները հայերենում» դոկտորական ատենախոսության մասին

Բավականին ծավալուն ատենախոսության մեջ Հրանուշ Զաքյանը կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները ներկայացրել է հայոց լեզվի պատմության գրավոր բոլոր շրջաններում. առաջին գլխում՝ գրաբարում, երկրորդ գլխում՝ միջին հայերենում, երրորդ գլխում արդի հայերենում: Յուրաքանչյուր գլխում քննել է բազմաբնույթ խնդիրներ:

Ներածության մեջ Հ. Զաքյանը փորձել է հիմնավորել գիտական ուսումնասիրության իր նպատակը. ճշգրտել հայերենի պատմական զարգացման երեք շրջանների կրկնասեռ բայերի ցանկերը, առանձնացնել հայերենի կրկնասեռ բայերի պատմական ժառանգության (գրաբարյան) հիմնաշերտը, ներկայացնել հայերենի կրկնասեռ բայերի ձևաիմաստային առանձնահատկությունները, մեկնաբանել կրկնասեռ բայերի՝ պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները, հիմնավորել տարժամանակյա կտրվածքում կրկնասեռ բայերի թվի նվազման իրողությունը, բացահայտել և ներկայացնել այն առանձնահատկությունները, որոնք կրկնասեռության դրսևորման առումով ցուցաբերում է հայերենը ցեղակից լեզուների համեմատությամբ (տե՛ս առ. 7-8):

Հեղինակը գտնում է, որ բայի սեռի քերականական կարգի հետ կապված բազմաթիվ հարցեր՝ հատկապես սեռային տեղաշարժերը, կարիք ունեն նորովի ուսումնասիրությունների: Դրանք «...շարունակում են մնալ լեզվաբանների ուշադրության կենտրոնում՝ սկսած հայերենի քերականության տարբեր ավանդույթներից ընդհուպ մեր օրերը» (առ. 5): Ըստ հեղինակի՝ կրկնասեռությունը հայ քերականագիտության մեջ կապվել է սեռային տեղաշարժի հետ. «...իսկ մենք հիմնավորում ենք կրկնասեռության երկու տեսակների գոյությունը՝ պայմանավորած սեռային տեղաշարժերով և սկզբնաձևային վիճակով, կրկնասեռության ոչ միայն տարժամանակյա, այլև համաժամանակյա կտրվածքում ձևավորվելու և չեզոքանալու հավանականությունը, որը դրսևորվում է արդի լեզվավիճակում՝ ժամանակակից արևելահայերենում» (առ. 10): Ամբողջ ուսումնասիրությունը կատարվել է և՛

համաժամանակյա, և՛ տարժամանակյա կտրվածքներով: Իբրև գիտական աղբյուրներ հիմնականում օգտագործվել են հայ և օտարազգի գիտնականների ուսումնասիրությունները, իբրև լեզվանյութ՝ 5-րդ դարի մատենագիր երկերից մինչև մերօրյա գեղարվեստական երկերը: Աշխատանքը կատարվել է պատմահամեմատական և համեմատական-գուգադրական մեթոդներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, հավելվածներից, աղյուսակներից և համառոտագրությունների ցանկից: Հարցի պատմությունը սկսում է Դիոնիսիոս Թրակացու «Քերականության արվեստ» աշխատության մեջ բայի սեռի վերաբերյալ հեղինակի կարծիքից, ըստ որի՝ նա ճանաչում է բայի երեք սեռ՝ ներգործություն, կիր և միջին, սակայն հույն փիլիսոփան որևէ բացատրություն չի տալիս, այլ թվարկում է մի քանի տարասեռ բայեր: Եվ սրանով ավարտվում է հունական կողմնորոշման շրջանի մեկնաբանությունը: Ատենախոսը այս բացատրությունից հետո միանգամից անցնում է լատինաբան քերականների կարծիքներին՝ գերազանցապես հիմնվելով Գևորգ Ջահուկյանի ուսումնասիրությունների վրա: Հեղինակը, անհրաժեշտ վերլուծությունների չհանդիպելով, գրում է. «Բոլոր քերականները, խոսելով տարբեր սեռերի բայերի մասին, բայաշարքերի օրինակներում ընդգրկում են տասնյակ կրկնասեռ բայեր՝ առանց վերջիններիս սեռային և խնդրառական առանձնահատկություններին ուշադրության դարձնելու: Պատճառը, ամենայն հավանականությամբ, լատինատիպ քերականությունների գործնական-տեխնիկական բնույթն էր, որը չէր ենթադրում հին բնագրերի գիտական ուսումնասիրություն՝ դրանից բխող հետևություններով» (ատ. 22): 18-րդ դարի քերականնարից կանգ է առել Շրոդերի կարծիքի վրա և նշել, որ իր նախորդների նման կրկնասեռ բայերը տեղ-տեղ շփոթել է չեզոք սեռի բայերի հետ: Բայց այնուամենայնիվ զանազանում է բայական հինգ սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոքական, անցողական և հասարակ:

Մխիթարյան միաբանության ներկայացուցիչների տեսակետների վերլուծությունները բնականաբար սկսում է Սեբաստացուց, որը ճանաչում է ութ հատկանիշ՝ սեռ, ձև, տեսակ, թիվ, դեմք, ժամանակ, եղանակ, լծորդություն՝ գլխավոր հատկանիշ համարելով ժամանակը: «Մ. Սեբաստացին ևս կրկնասեռությունը՝ որպես սեռի կարգի առանձնահատկություն չի դիտարկում և չի արժևորում, սակայն սեռի և

խնդրառության վերաբերյալ անում է որոշ հետաքրքիր դիտարկումներ» (ատ. 26): Պաղտասար Դպիրը բայի կարևոր հատկանիշը, ըստ ատենախոսի, համարում է միայն բառիմաստը ու թեև քննում է 167 բայ, որոնցից 40-ը կրկնասեռ, բայց դրանք չի տարբերակում:

Հ. Զաքյանը 18-րդ դարի լատինատիպ քերականություններում նկատում է, որ հեղինակներից Շրյոդերը, Սեբաստացին, Դպիրը ճանաչում են ներգործական, կրավորական, չեզոք, հասարակ սեռերը, անցողականը զանազանում է միայն Շրյոդերը: «Որոշ հեղինակներ (Մ. Սեբաստացի, Պ. Դպիր) նկատում են շատ բայերի՝ երկու սեռի նշանակությամբ պայմանավորված՝ տարբեր հոլովներով լրացումներ ընդունելու փաստը, սակայն ոչ մեկը այս երևույթը չի արժևորում: Գրաբարում նր/չր կրկնասեռություն ունեցող բազմաթիվ բայեր շարունակաբար ներառվում են միասեռ բայերի շարքերի մեջ» (ատ. 28):

Հետագա դարերի ինքնատիպ քերականներից քննել է Մ. Չամչյանի, Մեսրոպ Տեր-Հարությունյանի, Գաբրիել Ավետիքյանի, Վ. Չալըխյանի, Ա. Բագրատունու, Ա. Այտընյանի ուսումնասիրությունները և եկել այն եզրակացության, որ այս շրջանում բայի սեռի հարցի քննությունը դրվում է այլ հարթության վրա. «Ճանաչվում է բայի երեք սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք, դասակարգվում են սեռի և բնության խնդիրները, չեզոք սեռի բայերի՝ հայցականով լրացում ընդունելու փաստը, ներգործական սեռի՝ այլ հոլովներով լրացումներ ընդունելու փաստերը կա՛մ անտեսվում են, կա՛մ մեկնաբանվում որպես բնության խնդիր լրացումներ, և Ա. Բագրատունին և Ա. Այտընյանը նկատում և նկարագրում են քերականական երկու սեռի նշանակության համատեղումը բառարանային նույն բառությամբ, բայց որևէ անունով այդ երևույթը չեն կոչում» (ատ. 39-40):

Աշխարհաբարի քերականներից Հ. Զաքյանը բայական սեռը քննել է Խ. Աբովյանի և Պալասանյանի գործերում:

Խորհրդային շրջանի քերականական աշխատություններում իմաստաբանական և բառաքննական հետազոտությունները նոր ծավալ են ստանում (տե՛ս ատ. 40): Ատենախոսը հանգամանորեն քննել է այդ շրջանի ավագ սերնդի (Մ. Արեղյան, Ա. Ղարիբյան, Հովհ. Բարսեղյան, Գ. Սևակ, Հր. Աճառյան, Վ. Առաքելյան, Ա. Աբրահամյան, Մ. Ասատրյան,՝ Ա. Մուրվալյան, Վ. Քոսյան, Էդ. Աղայան, Ս.

Աբրահամյան, Ռ. Իշխանյան, Գ. Ջահուկյան, Հ. Հարությունյան) և կրտսեր սերնդի ՄԼ. Խաչատրյան, Էդ. Մկրտչյան, Գ. Խաչատրյան, Վ. Կատվալյան) գիտնականների մենագրությունները: Խորհրդային և արդի շրջանի քերականական աշխատությունների քննությունից պարզվում է. «...որ բայի սեռը բնութագրվում և ճանաչվում է հայ առաջին քերականների կողմից, սակայն կրկնասեռությունը՝ որպես սեռի քերականական կարգի առանձնահատկություն, գիտական արժևորում է ստանում միայն խորհրդային շրջանի, մասնավորապես Ա. Աբրահամյանի և Վ. Առաքելյանի ուսումնասիրություններում: Կրկնասեռությունը բնութագրվում է որպես քերականական տարբեր սեռերի նշանակությունների համատեղում բայական նույն բառությամբ՝ առանց ձևական-ձևաբանական փոփոխությունների: Ա. Աբրահամյանը և Վ. Առաքելյանը կրկնասեռությունը կապում են միայն ներգործական և չեզոք, այլ ուսումնասիրողներ՝ նաև կրավորական և չեզոք սեռերի նշանակությունների համատեղումների հետ: Իրենց աշխատությունների նպատակից դուրս համարելով հարցի տարժամանակյա ուսումնասիրությունը՝ լեզվաբանները կրկնասեռության դրսևորումը հիմնականում քննում են ժամանակակից արևելահայերենում (սղմ. 6-7): Կրկնասեռության վերաբերյալ հեղինակը արդի շրջանի գիտնականներից ուսումնասիրել է նաև Վ. Կատվալյանի, Գ. Խաչատրյանի, Էդ. Մկրտչյանի և Լ. Խաչատրյանի, Տ. Սաֆարյանի, ինչպես նաև օտարազգի մի շարք գիտնականների կարծիքները (Լ. Կուլիկով, Ա. Բոկարյով, Ա. Կիբրիկ, Գ. Ռոգով, Բ. Լևին, Մ. Ռոտեմբերգ, Ա. Լետուշիյ), տեղադրել նաև նախկինում կատարած իր աշխատանքների արդյունքները:

Քանի որ կրկնասեռության վերաբերյալ կան մի շարք տարակարծություններ, ասենախոսը ներկայացնում է այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է ինքը: Այսպես՝ Կրկնասեռության ըմբռնումը:

Կրկնասեռությունը՝ որպես բայի քերականական յուրահատկություն, ձեռքբերվի՞ է, թե՞ հատուկ է բային սկզբնաձևին:

Ինչ հատկանիշներով է պայմանավորվում կրկնասեռությունը: Կրկնասեռության ձևավորումը (կամ վերջինիս չեզոքացումը) կարո՞ղ է արձանագրվել համաժամանակյա կտրվածքում, թե՞ միայն տարժամանակյա փոփոխությունների հետևանք է:

Կրկնասեռությունը պայմանավորված չէ անցողականություն-անանցողականություն փոխադարձ անցումներով:

Բայերի բնագրային, ոճական, պատկերավորման ու այլ հանգամանքներից ելնող իմաստային ժամանակավոր-փոխաբերական առումները պետք է դիտել սեռային անցումներ:

Կրկնասեռության ճանաչման համար ո՞րն է առաջնային՝ բառարանային նշո՞ւմը, թե՞ կոնկրետ գործածությունը: Այս բոլոր հարցերի վերաբերյալ հեղինակը տվել է հիմնավոր պատասխաններ (տե՛ս առ. 60-67):

Առաջ քաշված վերոբերյալ հարցերին տալիս է յուրավսանն պատասխաններ՝ հղումներ տալով նաև Ա. Աբրահամյանի, Հ. Հարությունյանի, Մ. Աբեղանի, Էդ. Աղայանի, Ա. Մուրվալյանի, նաև ռուս գիտնականների (Н. Валгина, Д. Розенталь, М. Фомина, В. Цепукевич, Л. Теньер) աշխատություններին:

Հրանուշ Զաքյանի ատենախոսության առաջին գլուխը նվիրված է հին հայերենի կրկնասեռ բայերի իմաստային-գործառական դրսևորումներին: Առաջին գլուխն ունի երկու ենթագլուխ՝ «Հայերենի կրկնասեռ բայերի պատմական ժառանգությունը. դասական գրաբարի կրկնասեռ բայերը» (հինգ ենթաբաժնով) և «Հետդասական գրաբարի կրկնասեռ բայերը»:

Շարադրանքում տեղ են գտել մի շարք ենթահարցեր: Այսպես՝ քննվել են գրաբարի բայի լծորդության, խոնարհման ու կրկնասեռության առնչակցությունները: Դասական գրաբարի կրկնասեռ բայերի ձևային, իմաստային հատկանիշները, տարբեր խոնարհման կրկնասեռ բայերի (պարզ, բաղադրյալ, ածանցավոր) սկզբնահիմքերի կազմությունները, բառակազմական կաղապարները՝ առանձնացնելով գոյական, ածական և տարարժեք մի շարք բառեր՝ որպես կրկնասեռ բայերի սկզբնահիմքեր: Այս նույն գլխում քննվել է նաև դասական գրաբարի կրկնասեռ բայերի խնդրառությունն ու կաղապարումը՝ ըստ տարբեր դասային խմբերի ենթակաների հետ կապակցվելու կարողության: Գրաբարի մատենագիր երկերի, դրանց համաբարբառների և համապատասխան բառարանների լեզվանյութի հիման վրա հեղինակը կրկնասեռ բայերը քննել է ըստ դասական և հետդասական ենթաշրջանների, ձևաիմաստային և ոճական-գործառական հատկանիշների, ըստ խնդրառության և կաղապարավորման, լծորդությունների և սկզբնահիմքերի

կազմության՝ «...փորձելով ներկայացնել հայերենի բայական համակարգում կրկնաստեղծության ձևավորման և զարգացման դինամիկան, արձանագրել և մեկնաբանել կատարված տարժամանակյա փոփոխություններ» (սղմ. 8): Ատենախոսը պարզել է, որ հին հայերենի կրկնասեռ բայերի թիվը հասնում է 500, որից դասական շրջանին վերագրում է 250-ը՝ ըստ տարբեր խոնարհումների. ընդ որում՝ մեծամասնությունը՝ 200 -ե, 30՝ -ա, 4-5- ու լծորդության (-ի խոնարհման մասին ոչինչ չի գրում) և տալիս է իր հիմնավորումը: Դասական շրջանի կրկնասեռ բայերի խնդրառության վերաբերյալ գրում է, որ ներգործական սեռի բայերը միարժույթ կամ բազմարժույթ են, իսկ չեզոք սեռի բայերը՝ հիմնականում միարժույթ. իր կարծիքը հիմնավորում է Վ. Առաքելյանի և Հ. Հարությունյանի գրքերին նդումներով: Ըստ տարբեր ենթակաների հետ կապակցվելու կարողության դասական գրաբարի կրկնասեռ բայերը նման են միասեռ բայերին:

Հետդասական գրաբարի գործերում ատենախոսը առամձնացրել է շուրջ 200 և ավելի կրկնասեռ բայեր, որոնց մի մասը դասական գրաբարում չի եղել, իսկ մի մասը միասեռ է: «Ձևաիմաստային առանձնահատկությունների առումով գրաբարի երկու ենթաշրջանների կրկնասեռ բայերի տարբերություններից մեկը սկզբնահիմքերի կազմության փոփոխությունն է, մասնավորապես՝ հետդասական ենթաշրջանում պարզ սկզբնահիմքերով կրկնասեռ բայերի թվի նվազումը և համատիպ բաղադրիչներ ունեցող սկզբնահիմքերով կրկնասեռ բայերի թվի աճը՝ 220/50 և 20/100 հարաբերակցությամբ» (սղմ. 13):

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է միջին հայերենի կրկնաստեղծության իմաստային – գործառական դրսևորումներին: Այն ունի երկու ենթագլուխ: Առաջին ենթագլխում Հրանուշ Զաքյանը քննել է միջին հայերենի բայական համակարգի առանձնահատկությունները՝ հետևյալ ենթահարցերով՝ բայասեռի քերականական կարգի դրսևորումը միջին հայերենում, բայասեռի արտահայտության նոր միջոցները: Այնուհետև անդրադարձել է միջին հայերենի կրկնասեռ բայերի գրաբարյան շերտին, որում առանձնացրել է ձևաիմաստային առումով անփոփոխ և փոփոխված կրկնասեռ բայեր: Վերջում քննել է բուն միջինհայերենյան կրկնասեռ բայերը՝ տարժամանակյա և համաժամանակյա կտրվածքներով:

Միջին հայերենին նվիրված հարցի պատմությունը, մյուս շրջանների հետ համեմատած, աղքատիկ է: Հեղինակը գտնում է, որ դա պայմանավորված նրանով, որ միջին հայերենում կրկնասեռության վերաբերյալ լուրջ տեսական հիմնավորումներ կամ իմաստաքերականական բացատրություններ չեն կատարվել:

Հարցի պատմությունից: Այնուամենայնիվ ատենախոսը գրում է, որ միջին հայերենի «բառապաշարի տեսական ուսումնասիրության հիմքը դրվել է Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատությամբ», հատկապես միջին հայերենի նյութի քննության վերաբերյալ «Այտընյանի դրույթների հետագա զարգացումն ու փաստական հիմնավորումը» տեսնում է Ղ. Հովնանյանի «Հետազոտութիւնք նախնյաց ռամկորենի վրա» աշխատության մեջ: Միջին հայերենի լավագույն տեսաբաններից «Յ. Կարստը առաջին անգամ պատմահամեմատական մեթոդով հետազոտության է ենթարկում գրական հուշարձանների լեզվական երևույթները՝ տալով այն լեզվի ամբողջական պատկերը, որը ինքը անվանում է կիլիկյան հայերեն»: «Միջին հայերենի բայի և նրա խոնարհման համակարգի ամփոփ նկարագրությունը» տվել է Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմություն», «Լիակատար քերականություն հայոց լեզվի....» աշխատությունների մեջ: Միջին հայերենի պատմության տեսական հարցերի քննությամբ զբաղվել է նաև Ս. Ղազարյանը: «Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ մեր լեզվի միջին շրջանի համար տարբերում է միջին հայերեն, կիլիկյան հայերեն, կիլիկյան գրական հայերեն տերմինները»: Դերբայների տարժամանակա կտրվածքով լավագույն ուսումնասիրություն է Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատությունը, որի մեջ հանգամանալից քննել է միջին հայերենի դերբայները: Միջին հայերենի լեզվական տարբեր մակարդակների վերաբերյալ ուսումնասիրությունն ունեն նաև Հ. Մուրադյանը և Մ. Մուրադյանը, Ռ. Ղազարյանը (հարցի պատմությունը մանրամասն տե՛ս ատ. 126-130): Իբրև ուսումնասիրության աղբյուրներ ծառայել են Ն. Բյուզանդացու Բառգիրք ի գաղղիերեն լեզուի ի հայերեն, Կոստանդնուպոլիս, Karst-ի Worterbuch des Mittelarmanischen. (Բառարանը ձեռագիր վիճակում գտնվում է Մատենադարանում) և Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյանի, Միջին հայերենի բառարան Կբառարանները՝:

Հեղինակը հշույմ է, որ միջին հայերենի սկզբնաղբյուրները բազմազան են և ըստ ժամանակի բաժանվում են երկու խմբի՝ ա) սկզբնագիր աղբյուրներ, բ) բնագրերով չներկայացող, այլ արտագրություններով հասած աղբյուրներ: Սկզբնաղբյուրները չզրտորեն ներկայացնելու հանար հեղինակը հավաստի տվյալներ չի տեսնում բառարաններում, ուստի գրում է. «Մեր կատարած քննությունը վկայում է, որ միայն բառարանով առաջնորդվող ուսումնասիրողի տեսադաշտից դուրս են մնում խնդրո առարկա բազմաթիվ բայեր, քանի որ նախ՝ միջին հայերենի բառարանում արձանագրված չեն գրաբարյան կրկնասեռությունը պահպանած բայերը, և երկրորդ՝ բառարանում կան միասեռ դիտված բայեր, որոնք, ըստ միջինհայերենյան բնագրերի, կրկնասեռ են: Հնարավոր անճշտություններից խուսափելու համար մենք ուսումնասիրել ենք շուրջ չորս տասնյակ սկզբնաղբյուրներ և վերջիններիս տվյալները համադրելով բառարանային տվյալներին՝ միջին հայերենում տարբերակել ենք կրկնասեռ բայերի երկու շերտ՝ գրաբարյան կրկնասեռությունը պահպանած բայախումբը և բուն միջինհայերենյան կրկնասեռ բայերը (սղմ. 14-15):

Հեղինակի կատարած ուսումնասիրությունից պարզվում է, որ գրաբարյան շուրջ 500 կրկնասեռ բայերից 250 անցել են միջին հայերենին, բայց ոչ միանշանակորեն, նրանց ծանրակշիռ մասը՝ 200-ը առանց ձևախմաստային որևէ փոփոխության, իսկ 50-ը՝ ձևախմաստային տարատեսակ փոփոխություններով:

Բուն միջինհայերենյան կրկնասեռ բայերը, ըստ հեղինակի հաշվումների, 50-ն են. դրանք ուսումնասիրել է երկու կտրվածքով՝ ա) Տարժամանակյա կրկնասեռ բայեր

Հեղինակը պարզել է, որ գրաբարի միասեռ բայերի մի մասը՝ շուրջ 20-ը, միջին հայերենում դարձել են կրկնասեռ. «... քանի որ ձեռք են բերել նոր նշանակություններ կամ, գրաբարյան խնդրառությունը պահպանելով հանդերձ, ունեն նաև այլ ձևով խնդիր ստանալու հատկություն: Համադրական կրկնասեռության ձևավորման պարագայում նոր բայիմաստ(ներ)ը «ամրանում են» գրաբարյան բայի իմաստային շրջանակում, ինչպես՝ բռնել բայի՝ արմատակալել, կաչել (ծառերի մասին), զարկել բայի՝ ուղղություն բռնել, գնալ նշանակությունները (սղմ. 16): բ) Համաժամանակյա կրկնասեռ բայերը, ըստ հեղինակի, շրջանառության մեջ են մտնում հայոց լեզվի զարգացման երկրորդ շրջանում, հին հայերենի բնագրերում վկայված չեն: «Այս բայերի զգալի մասի մուտքը հավանաբար կատարվել է բանավոր ճանապարհով՝

հայերենի բարբառների միջոցով: Խնդրո առարկա բայերից մի քանիսի համար սերող հիմքեր են դարձել գրաբարում գործածվող անվանական անկախ բառույթները՝ աղբ, արև, արյուն, գուճ և այլն, որոնց հասկացության ծավալներն էլ սովորաբար պայմանավորել են նորակազմ կրկնասեռ բայերի իմաստային շրջանակները: Օրինակ՝ աղբ բառը գրաբարում ունի 1. կենդանիների և մարդու արտաթորանք, 2. տան, փողոցի ևն թափթփուկ, կեղտ (ԳԲ, Ա, 29), իսկ աղբել նորակազմ կրկնասեռ բայը՝ նբ՝ հողը պարարտացնել [Պարտ է անուշացնել զաղբն և ապա աղբել (ԳՎ, 16)], կատարվել է բանավոր ճանապարհով՝ հայերենի բարբառների միջոցով (ատ. 164): Այս գլխի վերջում հեղինակը գալիս է այն հետևության, որ միջին հայերենի կրկնասեռ բայերը գրաբարի համեմատությամբ դրսևորում են իմաստային-գործառական տարբերություններ. «....աչքի են ընկնում իմաստային առավել նեղ շրջանակով, ժամանակի կենցաղավարությունը բնութագրող բառեր են և, բնորոշ լինելով խոսակցական և բարբառային մասնաշերտերին, ունեն գործառության շատ ավելի նեղ շրջանակ» (սղմ. 17):

«Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները արդի հայերենում» – այսպես է կոչվում ատենախոսության երրորդ գլուխը, այն ունի չորս ենթագլուխ՝ «Արդի հայերենի կրկնասեռ բայերի տարժամանակյա շերտերը», «Արդի հայերենի կրկնասեռ բայերի համաժամանակյա շերտերը» (երկուական ենթաբաժիններով), «Ներգործական//չեզոք կրկնասեռությունը հայերենի տարժամանակյա դիտվածքում. կրկնասեռության չեզոքացում» և «Կրկնասեռությունը տարժամանակյա դիտվածքում. հայերեն և ցեղակից լեզուներ»:

Ըստ ատենախոսի՝ արդի հայերենը ունի կրկնասեռ բայերի տարժամանակյա երկուշերտ՝ ա) գրաբարյան, որում ընդգրկված է մոտ 100 բայ և միջինհայերենյան 10 բայ: Գրաբարից ձևաիմաստային առումով անփոփոխ արդի հայերենին են անցել մի շարք բայեր՝ հոգալ, պարապել, ապաստանել, թավալել, խռովել, աղաղակել, խորհրդածել և այլ մոտ 30 բայեր ձևաիմաստային տարատեսակ փոփոխությունների ենթարկված մոտ 60 կրկնասեռ բայեր, որոնց մեծ մասը կենսունակ է և ակտիվ գործածություն ունի: «Ձևային փոփոխությունները (բայի կազմության կամ գրության) հիմնականում համակարգային բնույթի են՝ ուղղված լեզվի միօրինակության ծավալմանը, և բուն կրկնասեռության հետ որևէ առնչություն չունեն: Առավել կարևոր

և հետաքրքրական են կրկնասեռ բայերի հասկացության ծավալների փոփոխությունները, որոնք հիմնականում պայմանավորված են բառապաշարի իմաստային զարգացմամբ: Գրաբարից ժամանակակից հայերենին անցած մի շարք կրկնասեռ բայեր այս շրջանում ձեռք են բերել նոր նշանակություններ (կրկնասեռության պահպանում՝ հասկացության ծավալի ընդարձակումով) (սղմ. 18):

Արդի հայերենի բառարաններում կան միջին հայերենից արդի հայերենին անցած մի շարք կրկնասեռ բայեր, որոնք հնաբանություններ են և չեն գործածվում (աղբել, խալսել, մճճել, ձաքոտել, բռնել, զարկել, արնել, արյունել, ծոմոել, ճկել, սազել), սակայն կան բայեր, որոնք իմաստի ընդլայնում են ստացել. «... հասկացության ծավալներն արդի հայերենում հիմնականում ընդլայնվել են՝ ի հաշիվ իմաստային նորաբանությունների: Օրինակ՝ բռնել և զարկել կրկնասեռ բայերը միջին հայերենում ունեն վեց-յոթ, արդի հայերենում՝ 30-ից ավելի նշանակություններ, այդ թվում՝ բարբառային առումներ (օրինակ՝ բռնել՝ ձերբակալել, կալանավորել, վարձել, ծառայության վերցնել, տարածվել, ծավալվել և այլն, զարկել՝ փչացնել, թալանել, շահել և այլն)» (ն. տ):

Ուսումնասիրելով արդի հայերենի կրկնասեռ բայերի համաժամանակյա շերտերը՝ ատենախոսը առանձնացրել է կրկնասեռության ձևավորումով տարժամանակյա տեղաշարժեր 30 բայերի շրջանակներում, որոնք, գրաբարում միասեռ լինելով, արդի հայերենում ձեռք են բերել նոր իմաստներ և դարձել կրկնասեռ: Հեղինակը հիշատակում է շուրջ 70 նորակազմ կրկնասեռ բայեր՝ շողարձակել, գերակայել, մթագնել, սրտնեղել, ցնորաբանել և այլն բայեր, որոնց անվանական բաղադրությունների բայացումն իրականացել է խոսքիմասային անցումով, այս հարցում կան նաև այլ բացատրություններ (ավելի մանրամասն տե՛ս առ. 237):

Հետաքրքրական են հայերենի տարժամանակյա դիտվածքում Նբ//չբ կրկնասեռության չեզոքացումները: Պարզվում է, որ հին հայերեն՝ շուրջ 500 (գրաբարի կրկնասեռ բայերի շուրջ 60 տոկոսը), միջին հայերեն՝ շուրջ 300 (միջին հայերենի կրկնասեռ բայերի մեծ մասը), արդի հայերեն՝ շուրջ 200 կրկնասեռ բայերի շրջանում ըստ հեղինակի կատարած վիճակագրության՝ կրկնասեռ բայերի թիվը նվազել է: «Եթե շուրջ 56000 բառ ունեցող գրաբարն ունի 500 կրկնասեռ բայ (բառային կազմի մոտ 1

տոկոսը), ապա արդի հայերենի՝ մոտ 300000 բառ ունեցող բառապաշարում կա ընդամենը 200 կրկնասեռ բայ» (սղմ. 25):

Ատենախոսության մեջ տարժամանակյա դիտարկումներ են արվել նաև հայերեն և ցեղակից լեզուների միջև: Համեմատությունից պարզվում է, որ աշխարհի գրեթե բոլոր լեզուներում ներկայումս նկատվում է կրկնասեռության տարածում և աճ՝ անկախ վերջիններիս կառուցվածքային տիպից, այս առիթով ատենախոսը կատարում է հետևյալ եզրակացությունը. «Ի տարբերություն ժամանակակից եվրոպական լեզուների, որոնցում տարժամանակյա կտրվածքում կրկնասեռ բայերի թիվն աճում է, հայերենում արձանագրվում է կրկնասեռության չեզոքացում և նորակազմ կրկնասեռ բայերի և բայական կրկնասեռ նորաբանությունների թվի նվազում:

Կատարված քննությունները վկայում են, որ նշված տարբերությունները պայմանավորված են հնդեվրոպական արևելյան տարածքի (արեալի) լեզուների և արևմտյան տարածքի լեզուների տարժամանակյա զարգացման առանձնահատկություններով:

Կատարված ուսումնասիրությունները հաստատում են հայերենի առանձնահատուկ բնույթը ցեղակից մյուս լեզուների համեմատությամբ և ունեցած ընդհանրությունները ինչպես ավանդաբար իրեն առավել մոտ համարվող արևելյան, այնպես մյուս՝ արևմտյան տարածքի լեզուների հետ: Թերևս հենց այս միջակա դիրքով է պայմանավորված հայերենում կրկնասեռության դրսևորման տարաբնույթ իրողությունների առկայությունը: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև հայերենի և ոչ ցեղակից լեզուների ընդհանրությունները կրկնասեռության դրսևորման առումով (ատ. 298):

Ատենախոսությունն ավարտվում է կարևոր եզրակացություններով, որոնցում հիմնավորվում են բայասեռի՝ մասնավորապես կրկնասեռության վերաբերյալ նորովի մեկնաբանություններով, որոնք հիմնավորվում են բավականին ծավալուն լաբորատոր աշխատանքով՝ հավելվածներով (7 հավելված), աղյուսակներով, տեսական գրականության քաջատեղյակ հղումներով, ուսումնասիրության աղբյուրների տարժամանակյա բազմազանությամբ:

Աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու և տպագրելու ժամանակ նկատի

ունենալու ակնկալությամբ առաջարկում ենք հետևյալ լրացումները:

1. Հ. Զաքյանը գրում է. «Հայ քերականագիտության մեջ կրկնասեռությունը ավանդաբար կապվել է սեռային տեղաշարժերի հետ, իսկ մենք հիմնավորում ենք կրկնասեռության երկու տեսակների գոյությունը՝ պայմանավորած սեռային տեղաշարժերով և սկզբնաձևային վիճակով, կրկնասեռության ոչ միայն տարժամանակյա, այլև համաժամանակյա կտրվածքում ձևավորվելու և չեզոքանալու հավանականությունը, որը դրսևորվում է արդի լեզվավիճակում՝ ժամանակակից արևելահայերենում» (ատ. էջ 11), Հայերենն ունի կրկնասեռ բայերի երկու տեսակ՝ սեռային տեղաշարժերի հետևանքով կրկնասեռ դարձած բայեր և սկզբնաձևային կրկնասեռություն ունեցող բայեր: Համաժամանակյա կտրվածքում բոլոր բայերի կրկնասեռությունը սկզբնաձևային է, իսկ տարժամանակյա կտրվածքում առանձնացվում են սկզբնաձևային կրկնասեռություն ունեցող և սեռային տեղաշարժերի հետևանքով կրկնասեռ դարձած բայերը (ատ. 296):

1. Վերջերս՝ 2024 թ., լույս տեսավ Յուրի Ավետիսյանի «Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն» աշխատությունը, որում լեզվաբանը ավելի հիմնավոր տեղաշարժեր է գրանցել. «Կան բայեր, որոնք գործածվում են տարբեր սեռերի նշանակությամբ: Դրանք կոչվում են կրկնասեռ բայեր, իսկ երևույթը՝ կրկնասեռություն: Կրկնասեռությունը պայմանավորված է մի քանի հիմնական գործոններով, որոնք սերտորեն կապված են սեռային տեղաշարժերի հետ» (Յուրի Ավետիսյան, «Ժամանակակից հայոց լեզու Ձևաբանություն, Երևան, 2024, էջ 183») և բերում է այդ գործոնների հիմնավորումները՝ «... ա) Իմաստափոխական կրկնասեռություն. բայի իմաստափոխության հիմունքով առաջացած կրկնասեռություն, բ) խնդրառական կրկնասեռություն. խնդրառության փոփոխության հիմունքով առաջացած կրկնասեռություն, գ) Գործառական կրկնասեռություն. խոսքում բայի գործածության հիմունքով առաջացած կրկնասեռություն» (ն. տ., էջ 183-184): Կրկնասեռ բայերի խնդրառության տիրույթում առկա է նվազագույնը երկու մասնակադապար՝ մեկ կամ երկու պարտադիր մասնակիցներով՝ ակտանտներով (գործորդ): Կադապարներից մեկն առաջադրում է ուղիղ խնդրի պահանջ, իսկ մյուսը բացառում է այդ պահանջը: (ատ. 296): Այդ մասին Յ. Ավետիսյանը գրում է. «տե՛ս բ) խնդրառական կրկնասեռություն. խնդրառական փոփոխության հիմունքով

առաջացած կրկնասեռություն: Սա հաճախ գուգակցվում է իմաստային հիմունքով փոփոխություններին» (ն. տ., էջ 184):

2. Հայոց լեզուն իր զարգացման ողջ պատմության ընթացքում ենթարկվել է օրար ազդեցությունների, դրանցից հիշարժան են հունարան և լատինարան կողմնորոշումները: Սրանցից առաջինի մասին գրելիս հիշատակել է միայն Թրակացուն՝ առանց անդրադառնալու նրա մեկնիչներին (տե՛ս Գ. Ջահուկյան, Տրակականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում!, Ե., 1954, ինչպես նաև Ա. Մուրադյան, Տնոնարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում!, Ե., 1971):

3. Լատինարան քերականներին ներկայացրել է ավելի հանգամանորեն, սակայն ուսումնասիրությունը ավելի հիմնավոր կլիներ, եթե ընդգրկվեր Վ. Համբարձումյանի «Լատինարան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.)», Ե., 2010 աշխատությունը: Կարծում ենք՝ աշխատանքն ավելի կշահեր, եթե ընդգրկվեին նաև Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը» Ե., 1948 : Զարմանալի էր, որ չկային Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկը» Ե., 1985 թ., Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի համառոտ պատմությունը» Երևան, 2006, իսկ Անտուան Մեյեի գիրքը կա նաև հայերեն՝ «Հայագիտական ուսումնասիրություններ», Ե.1978 :

4. Կարծում ենք՝ գիտական և ուսումնասիրության աղբյուրները հստակորոն պետք է տարանջատվեն: Խաչատրյան Պ., Քյոսեյան Հ., Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, Ս. Էջմիածին, 2003, 808 էջ: (հղում՝ 242) Հովնանյան Ղ., Հետազոտութիւնք նախնայաց ռամկորենի վրա, Տետր Ա, Վիեննա, 1898: (հղում՝ 325) Պողոսյան Ն., Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ /1512-1572/, Եր., ԵՊՀ հրատ., 2012, 86 էջ: (հղում՝ 35): Նշված գրքերը ուսումնասիրության աղբյուրներ են, հայտնվել են գիտական աղբյուրներում:

5. Ատենախոսը գրում է. «Եթե հայերենի պատմական զարգացման ընթացքում տեղի են ունեցել սեռային տեղաշարժեր, մենք չենք կարող բացառել, որ դրանք եղել են նաև գրաբարում: Եթե միջին հայերենն ու ժամանակակից հայերենն ունեն կրկնասեռություն ձեռք բերած և նորակազմ կրկնասեռ բայեր, մենք չենք կարող բացառել, որ այդպիսիք եղել են նաև գրաբարում: Ավելին, ասվածը ոչ միայն չի կարելի բացառել, այլև պետք է ընդունել որպես օրինաչափություն: Ամբողջ հարցը

համապատասխան փաստերի բացակայությունն է, քանի որ այս պարագայում մենք չունենք նախագրային հայերենը ներկայացնող լեզվական տվյալներ» (ատ. 88):

Կարծում ենք՝ այս նպատակի համար կարելի էր օգտագործել վիպասանական հայերենի գրավոր աղբյուրները: Ասենք՝ Սովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ վկայված առասպելներ և Գողթան երգերը:

Այսպիսով՝ Հրանուշ Սուրենի Զաքյանի «Կրկնասեռության իմաստային-գործառական դրսևորումները հայերենում» դոկտորական ատենախոսությունն ամբողջության մեջ մի նոր աստիճանի է բարձրացնում բայի կրկնասեռության վերաբերյալ մինչև այժմ հրապարակված ուսումնաիրությունները և նոր խոսք է այդ բնագավառում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է դոկտորական ատենախոսության բովանդակությանը: Հրատարակված գիտական աշխատանքներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդին՝ Հրանուշ Սուրենի Զաքյանին շնորհելու Ժ. 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի՝ իր հայցած գիտական աստիճանը, որին նա արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս

Թ. Ս. Շահվերդյան

բ. գ. դ., պրոֆեսոր

բ. գ. դ., պրոֆեսոր Թ. Ս. Շահվերդյանի ստորագրությունը հաստատում եմ:

«ՎՊՀ» հիմնադրամի գիտքարտուղար

Ս.Ս. Բեժանյան

մ. գ. թ., դոցենտ



07.05. 2025 թ.